ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/221

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/[1279082]-18 գրությամբ «Անապատ-2» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.11.2018թ. թիվ 01/463-18, 16.11.2018թ. թիվ 01/516-18 և 21.12.2018թ. թիվ 01/625-18 գրությունների պետճենների հիման վրա, 26.12.2018թ. թիվ 27/26-3/[1279082]-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Անապատ-2» Ա/Կ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Անապատ-2» Ա/Կ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Անապատ-2» Ա/Կ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացվել 08.10.2018թ. դրությամբ «Անապատ-2» Ա/Կ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը:

«Անապատ-2» Ա/Կ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 08.01.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. **<u>«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.</u>**

«Բարձրավոլտ Էլեկտրոցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ հայտնել է, որ «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/40» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հարցում է ներկայացվել «Անապատ-2» Ա/Կ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.12.2018թ. տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերհսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 19 000 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 08.01.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸի կարիքների համար 220կվ «Մեղրի 1/2/» ՕԳ-ի Մեղրի-Քաջարան հատվածում հենարանների մոտեցման ճանապարհների, հեղեղատարների, կամրջակների, բետոնե հենապատերի կառուցման և բետոնե պատնեշների վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***08.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Անապատ-2» Ա/Կ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6.1-րդ կետով կայացված որոշմամբ «Անապատ-2» Ա/Կ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 11.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Անապատ-2» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 19 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Անապատ-2» Ա/Կ-ի հայտը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/[1279082]-18 գրությունը, «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 05.11.2018թ. թիվ 01/463-18, 16.11.2018թ. թիվ 01/516-18 և 21.12.2018թ. թիվ 01/625-18 գրությունները և կից փաստաթղթերը, «Անապատ-2» Ա/Կ-ի 08.10.2018թ. հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸի կարիքների համար 220կվ «Մեղրի 1/2/» ՕԳ-ի Մեղրի-Քաջարան

հատվածում հենարանների մոտեցման ճանապարհների, հեղեղատարների, կամրջաների, բետոնե հենապատերի կառուցման և բետոնե պատնեշների վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***08.10.2018թ.*** հայտ է ներկայացրել «Անապատ-2» Ա/Կ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6.1-րդ կետով կայացված որոշմամբ «Անապատ-2» Ա/Կ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 06.12.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Անապատ-2» Ա/Կ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 11.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Անապատ-2» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 19 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Անապատ-2» Ա/Կ-ի հայտը Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժինների մասով մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Անապատ-2» Ա/Կ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 08.10.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 19 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել 08.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Անապատ-2» Ա/Կ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 08.10.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի

քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Անապատ-2» Ա/Կ-ն «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-18/40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/[1279082]-18 գրությամբ «Անապատ-2» Ա/Կ-ին (ՀՎՀՀ՝ 09202127) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ